ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանը միջնադարի ականավոր քաղաքական և կրոնական գործիչներից մեկն է։ Որպես ստեղծագործող, նա իրավամբ դասվում է հայ ամենանշանավոր պատմիչների շարքը։

Ստ. Օրբելյանի ծննդյան ստույգ թվականը դեռևս պարզված չէ։ Ուսումնասիրողներից Ա. Աբրահամյանը գտնում է, որ նա «ծնվել է 1250—60-ական թվերին»[1]։ Թ. Հակոբյանն ու Ս. Մելիք-Բախշյանը, հիմք ունենալով այն իրողությունը, որ նա 1280 թ. ձեռնադրվում է քահանա, ենթադրում են, թե «այդ ժամանակ Ստեփանոսը առնվազն պետք է եղած լիներ 25—30 տարեկան, ուրեմն նրա ծննդյան թվականը մոտավորապես ընկնում է 1250-ական թվականներին»[2]։

Հակված չլինելով առարկելու վերոհիշյալ մասնագետների ենթադրությանը, ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի կարևոր վկայության վրա, որը, մեր կարծիքով, մասնակիորեն նպաստելու է Ստ. Օրբելյանի ծննդյան մոտավոր ժամանակամիջոցը որոշելուն։

«Պատմութիւն տանն Սիսական» աշխատության հիշատակարանում (գլ. ՀԲ) հոգևոր դասի ներկայացուցիչներին պատմիչն իր ավանդներն է պատգամում արդեն «մայրամած» և «շառագունեալ դիմօք»[3]։ Եթե «մայրամած դեմք» կապակցությունն ընդունենք որպես ծերացած մարդուն և ոչ հիվանդին բնորոշող արտահայտություն, ապա նրա ծննդյան թվականը թերևս կարելի է ետ տանել մոտավորապես տասը տարով, այսինքն՝ նա ծնված պետք է լինի XIII դարի 40-ական թթ. և ապրած ոչ պակաս 60 տարի։ 45—50 տարեկան առողջ մարդուն երբեք էլ հատուկ չէ «մայրամած դեմք» բնորոշումը։ Բացի դրանից, ինչո՞ւ ընդունենք, որ 1280 թ. քահանա (տվյալ դեպքում՝ կուսակրոն) օծվելու ժամանակ «Ստեփանոսը առնվազն պետք է լիներ 25—30 տարեկան», մանավանդ երբ ինքն անձամբ վկայում է, թե «Քահանայացայ և մանկական տիօք կարգեալ կղերիկոս» *(էջ 349, ընդգծումը մերն է— Գ. Գ.) և* «տհաս խակութեամբ նստայ աթոռ վարդապետական» *(էջ 350, ընդգծումը մերն է— Գ. Գ.) Ստեփանոսը որքան էլ իրեն նվաստացնի, այնուամենայնիվ, նրա այս արտահայտություններն ինչ-որ չափով իրական հիմք ունեն։ Անշուշտ, եկեղեցական կանոնադրությամբ քահանա կամ վարդապետ ձեռնադրում էին հա-*

---

1 *Ա. Գ. Աբրահամյան, Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրությունը», Երևան, 1942, էջ 3։*

2 *Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, էջ 26։*

3 *«Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 370 (այսուհետև սույն աշխատության էջերը կտրվեն տեքստում՝ փակագծերի մեջ)։*

սուն տարիքի մարդկանց, սակայն պատմության մեջ քիչ չեն նաև բացառությունները։

16 տարի անընդմեջ ղեկավարելով Սյունյաց մետրապոլիտական աթոռը՝ Ստ. Օրբելյանը վախճանվում է և հանդիսավոր արարողությամբ թաղվում Ամաղուի Նորավանքի Օրբելյան իշխանների տոհմական դամբարանում։ Կ. Կոստանյանցը[4], Մաղաքիա արք. Օրմանյանը[5] և ուրիշներ, հիմք ունենալով Տաթևի վանքի ձուլածո զանգերի վրա եղած արձանագրությունները, գտնում են, որ նա վախճանվել է 1304 թ.[6]։

Ալիշանի կարծիքով Տաթևի զանգերի արձանագրությունները չպետք է ունենային ՉԾԳ (1304) թվականը, որովհետև «յետնոյ ուրուք» գործ են։ Նույն կերպ է մեկնաբանված «Ազգագրական հանդեսում»[8]։ Ալիշանը առաջարկում է հիշյալ զանգերի թվականը ընթերցել ՉԾԸ (1309), քանի որ, ըստ նրա, Ստ. Օրբելյանը Սյունյաց եպիսկոպոսական գահին բազմել է 1286—1309 թթ.[9]։ Տաշյանը[10] և, նրան հետևելով, Հր. Աճառյանը Ստ. Օրբելյանին են համարում Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսին (1307—1322) հղած թղթի հեղինակներից մեկը[11], որն ընդունելի չէ, որովհետև, ինչպես հայտնի է, Կոստանդին Գ-ն հայրապետական գահին բազմել է 1307 թ., երբ Ստ. Օրբելյանն արդեն մահացած էր։ Նորագույն ուսումնասիրողներից Թ. Հակոբյանն ու Ս. Մելիք-Բախշյանը գրում են, որ Ստ. Օրբելյանը վախճանվել է 1305 թ.[12]։

Օրբելյանի մահվան միակ ստույգ թվականը փորագրված է Ամաղուի Նորավանքի՝ Օրբելյան իշխանների տոհմական դամբարանում գտնվող նրա տապանաքարին, ուր որոշակիորեն ընթերցվում է. «Թվիս ՉԾԲ (1303). Այս է շիրիմ հանգ[ր]ստե[ա]ն մեծի մետրապպիտին Սիւն[ե]աց Ստեփանոսի»[13]: Այս վկայությունը անառարկելիորեն հավաստում է, որ պատմիչը վախճանվել է 1303 թ.։ Հավանաբար, նկատի ունենալով Ստ. Օրբելյանի տապանաքարի այս արձանագրությունը, Լ. Խաչիկյանը առարկում է Ղ. Ալիշանին և մյուս ուսումնասիրողներին, հավաստելով, որ Ստեփանոս Օրբելյանը մահացել է 1303 թ.[14]։

Ստ. Օրբելյանի մասին Սյունյաց նահանգի այլևայլ վայրերի վիմական արձանագրություններում[15] և մատենագրական աղբյուրներում պահպանվել են

---

4 «Ստեփաննոս Օրպէլեանի «Ողբ ի ս. Կաթուղիկէն...», բնագիրը առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակեց Կ. Կոստանյանց, Տփղիս, 1885։

5 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1913, էջ 1773։

6 «Դիվան հայ վիմագրության», պրակ 2, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1961, էջ 37։ Հմմտ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 236։

7 Ալիշան, Սիսական, էջ 236։

8 «Ազգագրական հանդես», հատ. Գ, Թիֆլիս, 1898, էջ 141։

9 Ալիշան, Սիսական, էջ 20։

10 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 115 ՅՐ, 180։

11 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, Երևան, 1948, էջ 631—633։

12 Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ստեփանոս Օրբելյան, էջ 35։

13 «Դիվան հայ վիմագրության», պրակ 3, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 233։ Հմմտ. Քաջբերունի (բժ. Գարրիել Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողություններ, «Արարատ», 1890, էջ 38։ Ալիշան, Սիսական, էջ 194 և այլն։

14 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, «Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 190 (տողատակ) և էջ 198։

15 «Դիվան հայ վիմագրության», պրակ 3, էջ 208, 215, 220, 222, 238 և հտ.։

բազմաթիվ հիշատակագրություններ, որտեղ գրիչները երբեմն շոայլ մակդիրներով են փառաբանում իրենց մեծահամբավ պատմաբան-մետրապոլիտին և Օրբելյան տիրապետող տոհմի ականավոր ներկայացուցիչին։

Ստ. Օրբելյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որից պահպանվել ու մեզ են հասել հետևյալ աշխատությունները.

1. «Պատմութիւն տանն Սիսական» (1299).

2. «Ողբ ի կաթողիկէ...» (1299)[16].

3. «Ժամանակագրութիւն» (ընդգրկում է 968—1290 թթ.).

4. Գրիգոր Անավարզեցուն հղած «Թուղթը» և «Միաբանութեան ձեռնարկը» (1302).

5. «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» (1302).

6. «Տեսիլ սրբոյն Մեթոդի՝ եպիսկոպոսի Պատարայ և վկայի յաղագս անցելոյն, ներկայիս և ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր թարգմանեալ է տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի».

7. «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի» (1302)։

Ստ. Օրբելյանն օրինակել է տվել նաև մի շարք ձեռագիր մասյաններ, որոնցից հիշատակելի են. ա) Ավետարան՝ իր եղբորորդի Հովհաննես-Օրբել վարդապետի (հետագայում՝ Սյունյաց արքեպիսկոպոս և մետրապոլիտ) համար (1302)[17], բ) «Մեկնութիւն ժողովողի» (1303), գ) Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» (1303)։

Օրբելյանի ստեղծագործական կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում «Պատմութիւն տանն Սիսական» կամ «Պատմութիւն նահանգին Սիսական» ծավալուն երկը, որը Սյունիքի միջնադարյան ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կյանքի վերաբերյալ գրական մի հուշարձան է։ Այս աշխատությունը վաղուց ի վեր եղել է հայագետների ուշադրության կենտրոնում և ունեցել է մի շարք հրատարակություններ։ Առաջին անգամ հրատարակվել է Կարապետ Շահնազարյանի ջանքերով Փարիզում, 1859 թ.։ Դրանից երեք տարի հետո՝ 1861 թ., հրատարակեց Մկրտիչ Էմինը Մոսկվայում՝ երկու գրչագիր օրինակների և փարիզյան տպագրության բաղդատությամբ։ Մոսկովյան հրատարակությունը, չնայած թերություններին, աչքի է ընկնում գրքի վերջում զետեղված «Հարկացուցակի» լրիվությամբ։ 1911 թ. Թիֆլիսում Ղուկասյան մատենաշարով լույս տեսավ երրորդ հրատարակությունը, որը, ի տարբերություն նախորդների, ուներ անվանացանկեր և օժտված էր գիտական ապարատով։ «Պատմությունը» լույսընծայվեց Պետերբուրգում նաև ֆրանսերեն լեզվով՝ Բրոսեի թարգմանությամբ[18]։ Առանձին գլուխներ (հատկապես մոնղոլների վերաբերյալ հատվածները) ռուսերեն թարգմանել և հրատարակել է Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Քերովբե Պատկանյանը[19], իսկ 65-րդ

---

16 Գրված է խաչատուր Կեչառեցու խնդրանքով։

17 Մ. Սմբատյանց, Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 230—238։

18 M. Brosset, Histoire de la Siounie par Stephannos Orbelian, traduite de l'armenien, 2 livraisons, St.-Petersbourg, 1864—1866.

19 К. П. Патканов, История монголов, по армянским источникам, вып. I. СПб., 1873.

գլուխը առանձին լույս է տեսել Մադրասում, Մոսկվայում, ինչպես նաև Փարիզում՝ Սեն-Մարտենի աշխատասիրությամբ[20]։

Ստ. Օրբելյանի վաղեմի երազանքն է եղել շարադրել Սյունյաց նահանգի պատմությունը սկսած հնագույն դարերից ընդհուպ մինչև իր ապրած ժամանակաշրջանը։ Այս բարդ և դժվարին գործը նա ավարտում է 1299 թ.։ Գլաձորի, Հերմոնի և այլ կրթօջախների գրիչները չեն հապաղում ընդօրինակել և տարածել այս մեծարժեք երկը, որի առաջին իսկ էջերից ընթերցողը նկատում է հեղինակի բացահայտ միտումը՝ չպետք է «անփոյթ առնել և ընդ անգիտութեան խաւարաւ թողուլ» Սյունյաց նախնիների հիշատակը, նրանց կատարած գործերը, աշխարհիկ և հոգևոր կալվածատիրության սեփականատիրական իրավունքները, վանքերի, եկեղեցիների ու նրանց սպասավորների արտոնյալ վիճակը, ի վերջո, պատմական բոլոր այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում և, մասնավորապես, Սյունյաց լեռնաշխարհում (էջ 3—4)։

Աշխատությունը շարադրելիս Օրբելյանն օգտագործել է հետևյալ սկզբնաղբյուրները.

1. Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Ղևոնդի, Ուխտանեսի, Սամվել Անեցու, Սամվել Կամրջաձորեցու և այլոց երկերը.

2. Հայոց թագավորների և Սյունյաց իշխանների հրամանագրերն ու նամակները.

3. Կաթողիկոսական կոնդակներն ու Սյունյաց եպիսկոպոսների գրագրությունները, ճառերն ու վկայաբանությունները.

4. Տաթևի վանքի գրապահոցներում եղած մատենագրական և կալվածագրային փաստաթղթերը.

5. Վիմական արձանագրությունները.

6. «Վրաց ժամանակագրությունը» («Քարթլիս ցխովրեբա»).

7. Մոնղոլ էլչաններից ստացած հրովարտակներն ու հրամանագրերը.

8. Ձեռագիր մատյանների հիշատակարանները և այլն։

Օգտվելով Մովսես Խորենացուց, Օրբելյանը Սյունյաց պատմությունն սկսում է ավանդական Սիսակ նահապետից, այնուհետև հաջորդաբար ներկայացնում է նահանգի առավել աչքի ընկած պատմական դեմքերը և նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները՝ ընդհուպ մինչև Օրբելյան տոհմի հանդես գալը։ «Պատմութեան» II գլխում նա թվարկում է Սյունյաց նահանգի 12 գավառները[21], աշխատելով ավանդական զրույցների հիման վրա ստուգաբանել դրանց անունների առաջացման վարկածները։

Պատմիչն ապա նշում է Բաղաբերդը, Երնջակի, Շլորուտի, Բարկուշատի, Անդոկա, Հաբանդա (Ձագեձորի), Բղենո, Գեղարքունո, Վանանդա, Բորոտան, Բաշեթաղի, Որոտան (Որոտնա), Սյունյաց, Շահապոնից բերդերը, ինչպես

---

[20] Sain-Marten, M. S., Memoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris. 1819.

[21] Այդ գավառներն են՝ Ծղուկ, Վայոց ձոր, Գեղաքունի, Սոթք, Աղահեջ (Քաշաթաղք և Խոժոռաբերդ), Հարանդ, Բաղք (Աճան-Աճանան), Կովսական (Գրհամ), Արևիք (Տաշտոն և Մեղրի), Զորք (Կապան), Երնջակ և Գողթն, Ճահուկ (Շահապոնք). Ստ. Օրբելյան, էջ 6—7։

նաև Կքեբերդն ու Խոժոռաբերդը։ Վայոց ձորի տարածքում նա հիշատակում է Կապույտ, Հրասեկա (Հրաշկաբերդ), Սուլիմա և այլ բերդեր ու ամրոցներ, որոնք եղել են Սյունյաց ռազմական հզորության հենարանները (էջ 7—8)։ Հեղինակը գովեստի բառայլ մակդիրներով է ներկայացնում Սյունյաց նախարարական տան և մեծ իշխանների գործունեությունը։ Այդ Սյունյաց նախարարն էր, որում է պատմիչը, որ իրեն ենթակա 21 իշխանների զորագնդերով պահպանում էր Հայաստանի հյուսիս-արևելյան սահմաններն օտար ներխուժումներից։ Նա առանձնահատուկ տեղ է հատկացնում պարսից մայրաքաղաք Տիզբոնն ավերող Անդոկ Սյունեցուն և նրա հայրենասեր որդի Բաբիկին, որը վերականգնեց փլուզված Սյունիքի նախարարությունը (գլ. ԺԴ)։ Մատենագիրը չի մոռանում նշավակել Վասակ Սյունեցուն՝ մի առանձին գլուխ նվիրելով վերջինիս կատարած արարքների համառոտ նկարագրությանը («Գործք ռնարի և վատ իշխանին Սիւնեաց Վասակայ և պատճառ նորա կորստեանն»)։ Ստ. Օրբելյանը անդրադառնում է Վարդանանց ճակատամարտին և այն ընդհարումներին, որոնք տեղի են ունեցել Ավարայրի ճակատամարտից հետո «ի մէջ Եղեգեաց և Մողան»՝ Մարտիրե զորականի հրամանատարությամբ (էջ 49)։

Որպես հոգևորական և Սյունյաց մետրապոլիտ, Ստ. Օրբելյանը չէր կարող անտեսել նահանգի առավել աչքի ընկած կրոնական գործիչների (Գրիգորիս, Երիցակ, Գյուտ, Ստեփանոս Իմաստասեր, Սողոմոն, Հովհաննես և այլն) վարքագրությունը։ Ջերմությամբ և ակնածանքով է նա ներկայացնում հայ երաժշտության մեծ երախտավոր Ստեփանոս Իմաստասերին՝ բնութագրելով նրան որպես «Արեգակն ջահաւորեալ՝ ի տանս Թորգոմեան՝ երանելի և մեծ նահատակն[22], պարծանաց զաւակն... մարդն երկնային և հրեշտակն երկրային, հանապազ մեռեալն և միշտ կենդանին...» (էջ 95—96)։ Ապա հակիրճ խոսում է նրա քույր Սահակադուխտի մասին, որը ճգնելիս է եղել Գառնիի կիրճերից մեկում՝ հորինելով և ժողովրդին ուսուցանելով իր երգերը (էջ 101)։

Ստ. Օրբելյանը գրում է արաբական արշավանքների և խալիֆայության տիրապետության օրոք երկրի քաղաքական և տնտեսական ծանր կացության մասին, չի մոռանում հիշատակել Խուռամյանների առաջնորդ Բաբեկին և նրա արշավանքը դեպի Գեղարքունիք (էջ 115)։ Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում «Պատմութեան» այն հատվածները, որտեղ հանգամանորեն լուսաբանվում են Սյունյաց նախարարական տոհմի քայքայման և գահերեցության ինստիտուտի հաստատման սոցիալ-քաղաքական պայմանները, միջֆեոդալական հարաբերությունների սրման դրդապատճառները, տիրույթների համար ծագած խռովություններն ու ռազմական ընդհարումները։ Նկարագրված է Սյունյաց Մարիամ տիկնոջ (Բագրատունի Սմբատ I թագավորի քրոջ) շինարարական լայն գործունեությունը (էջ 126)։ Պատմիչը հակակրանքով է ներկայացնում ցուրաբերդցիներին կամ տամալեկցիներին, որոնք իրենցից բռնությամբ խլված պապենական հողակտորները ետ վերադարձնելու ակնկալիքով մեկ անգամ չէ, որ ապստամբել էին Սյունյաց հոգևոր կենտրոնի դեմ (էջ 168, 181—183, 188—194)։

---

22 Պատմիչը նկատի ունի Ստեփանոս Իմաստասերի եղերական մահը Վայոց ձորի Մոզ ավանում, 735 թ. հուլիսի 21-ին։

Հայ միջնադարյան ճարտարապետության պատմության համար մեծ կարևորություն են ներկայացնում աշխատության այն էջերը, որոնք նվիրված են Տաթևի վանքին, Թանատի վանքին, Բղենո Նորավանքին, Վահանավանքին, Ամաղուի Նորավանքին և այլ կառուցումներին (էջ 171—180)։

Որպես տիրապետող դասի ներկայացուցիչ և Սյունյաց իշխանազուն, Օրբելյանը ջանում է արդարացնել Սյունիքի (Կապանի) թագավորության ստեղծումը, որը, նրա կարծիքով, երևան է եկել պատմական անհրաժեշտությամբ՝ ժամանակի թելադրանքով (էջ 220)։

Ստ. Օրբելյանի «Պատմութեան» շնորհիվ որոշակի տեղեկություններ ենք ստանում Սյունյաց հետևյալ յոթ զահակալների մասին, որոնք հաջորդաբար իշխել են Հայաստանի այս հատվածում 200 տարի շարունակ.

ա) Սմբատ I, որդի Սահակ իշխանի (973—998),
բ) Վասակ I, որդի Սմբատ թագավորի (998—1040)[23],
գ) Սմբատ II, որդի իշխանաց իշխան Աշոտի (1040—1051),
դ) Գրիգոր I, որդի իշխանաց իշխան Աշոտի (1051—1084),
ե) Սենեքերիմ I, որդի Սևադայի, եղբայր Շահանդուխտ թագուհու (1084—1094?),
զ) Գրիգոր II, որդի Սենեքերիմի[24] (մեռ. 1166),
է) Հասան Խաչենցի, ամուսին Գրիգոր II-ի դուստր Կատայի (1166—1170)։

Ստ. Օրբելյանի նկարագրությունից կարելի է որոշակի գաղափար կազմել Սյունյաց թագավորության մայրաքաղաք Կապանի մասին։ Այն ունեցել է առանձին փողոցներ ու թաղամասեր, որոնցից հիշատակվում են Խնձորի գլուխն ու Ջհտաթաղը։ Պատմիչը ցավով է ընթերցողին ներկայացնում Կապանի կործանումը 1103 թ. Զորթմանի հրոսակների կողմից։ Սյունյաց թագավորությունն այդ ժամանակ «ընդ ձեռամբ ունէր բերդս 43, և անուանիքն ի նոցանէ 12. և վանորայս 48, և գիւղս 1400, և մայրաքաղաք զԿապանն» (էջ 245)։ Նա արձանագրում է երկրի կործանումից հետո Սյունյաց իշխանական տոհմերի արտագաղթը ինչպես Հայաստանի մյուս գավառները, այնպես էլ դեպի օտար երկրներ։ Պատմիչը նշում է նաև իր կրած տառապանքները՝ նահանգի հոգևոր օջախները մոնղոլական ասպատակություններից զերծ պահելու և հոգևորականության ապահարկ վիճակը պահպանելու գործում։

Շարադրելով իր տոհմի պատմությունը, Ստ. Օրբելյանը մեծ չափով օգտվում է ինչպես հայկական, այնպես էլ վրացական աղբյուրներից։

Նրա «Պատմութիւնը» առաջավել հավաստի և իրական է դառնում այն ժամանակ, երբ ականատեսի աչքերով նկարագրում է հասարակական-քաղաքական հարաբերություններում տեղի ունեցած իրադարձությունները, իր և յուրայինների հանդիպումները մոնղոլ խանների հետ, օտար իշխանավորների՝ Ենթակա ժողովուրդների նկատմամբ վարած կեղեքիչ քաղաքականությունը,

23 Սմբատ I-ը և նրա որդի Վասակը թաղված են Տաթևի վանքում (Ստ. Օրբելյան, էջ 220, 233)։

24 Սմբատ II-ից մինչև Գրիգոր II թաղված են Վահանավանքում, որտեղ մեր կատարած պեղումների ժամանակ հայտնաբերվել են պատմիչի վկայությունները հաստատող շուրջ երեք տասնյակ վիմագրեր։

աշխարհիկ և հոգևոր տերերի միջֆեոդալական հարաբերությունները, տարերային աղետները. սովն ու համաճարակները։

Կիրակոս Գանձակեցու նման՝ Ստ. Օրբելյանը տիպական գույներով ներկայացնում է մոնղոլների նիստուկացը, կենցաղը, սովորությունները (էջ 294)։

Նա չի մոռացել հիշատակել կիլիկյան հայ թագավորներին, որոնցից դրվատանքով նշում է Լևոն III-ին, Հեթումին և այլոց։ Գրքի վերջում նա զետեղել է կաթողիկոսների և Սյունյաց եպիսկոպոսների ցանկերը՝ նրանց գահակալության տարիների քանակով հանդերձ։ Պատմական մեծ արժեք է ներկայացնում այս աշխատությանը կցված «Հարկացուցակը»։

Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունն աչքի է ընկնում հարուստ փաստական նյութերի ընդգրկմամբ։ Առանց վարանելու կարելի է ասել, որ նրա օգտագործած սկզբնաղբյուրները, առավելապես նրանք, որոնք վերաբերում են զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանին, իրենց հիմքով իրական են, ստույգ և հավաստի։ Մեծ արժեք են ներկայացնում նրա մեջբերած վիմական արձանագրությունները, որոնք հմտորեն վերծանվել և ընդօրինակվել են հեղինակի կողմից։ Ստ. Օրբելյանի վերծանությունների շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել այժմ եղծված և քայքայված բազմաթիվ վիմագրություններ։ Անշուշտ, այս հանգամանքը նկատի ուներ ակադ. Հ. Օրբելին, երբ Սյունյաց պատմիչին էր վերագրում հայոց առաջին վիմագրագետի մեծ պատիվը[25]։ Վիմական արձանագրությունների օրբելյանական ընթերցումների շնորհիվ հնարավոր է դարձել ամբողջապես վերականգնել Ամաղուի Նորավանքի, Տաթևի, Գնդեվանքի, Վահանավանքի, Վանեվանի և այլ տաճարների պատերին փորագրված բազմաթիվ արձանագրություններ, առանց որոնց միջնադարով զբաղվող պատմաբաններին չափազանց դժվար էր լինելու որոշակի պատկերացում ունենալ ժողովրդի սոցիալ-իրավական վիճակի, կալվածատիրական գործարքների եղանակների ու ձևերի, հարկերի ու տուրքերի, առևտրական հարաբերությունների, միջնադարյան վանքերի ապահարկության և վարչա-տնտեսական գործունեության վերաբերյալ։

Ստ. Օրբելյանին վերագրվող աշխատությունների մեջ աչքի է ընկնում «Ժամանակագրութիւն» խորագրի տակ մեզ հասած մեկ այլ ստեղծագործություն, որի գրչագիր օրինակը գտնվելիս է եղել Կարոն Սանասարյան վարժարանում և հրատարակվել է Աշ. Աբրահամյանի կողմից։ «Ժամանակագրութիւնը» սկսվում է 968 թ. և ընդգրկում է 322 տարվա ժամանակահատված, այսինքն՝ մինչև Տարսայիճ իշխանի մահը (1290 թ.)։ Աշ. Աբրահամյանի կարծիքով Օրբելյանը «նպաստակ չի ունեցել կազմել ինքնուրույն ժամանակագրություն, այլ ցանկացել է լրացնել ու շարունակել Սամվել Անեցու «Ժամանակագրութիւնը»[26]։ Որ այս երկը իրոք պատկանում է Ստ. Օրբելյանի գրչին, Աշ. Աբրահամյանն իր ենթադրության համար որպես կռվան ներկայացնում է այն իրողությունը, որ Ստ. Օրբելյանի «Ժամանակագրութեան» և «Պատմութեան» որոշ փաստերի տարեգրությունը համընկնում է՝ թեև նկատելի անճշտություններով[27]։ Օրինակ, 1286 թ. շարադրված ժամանակագրության մեջ անտրամաբա-

25 «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք. կազմեց Հ. Ա. Օրբելի. Երևան, 1966, էջ XI։

26 Աշ. Աբրահամյան, Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրութիւնը», էջ 4, 5։

27 Նույն տեղում, էջ 4։

նական էր ներկայացնել 1290 թ. դեպքերն ու իրադարձությունները (թեկուզև՝ Տարսայիճ Օրբելյանի մահվան թվականը)։ Աշ. Աբրահամյանը կարծում է, որ Ստ. Օրբելյանն իր «Ժամանակագրութեան» հիմնական մասը գրել է 1277 թ., ապա շարունակել ու հասցրել է մինչև 1290 թ.։ «Զեռագրի գրչությունը ըստ պալեոգրաֆիկ տվյալների,— գրում է բնագրի հրատարակիչը,— կարելի է համարել XIV—XV դդ. ընդօրինակություն»[28]։

«Ժամանակագրութեան» քննությանը անդրադարձել են նաև Լ. Խաչիկյանն ու Վ. Հակոբյանը, որոնք, առարկելով Աշ. Աբրահամյանին, պնդում են, որ հիշյալ տարեգրությունը չի պատկանում Ստ. Օրբելյանին[29]։

Ստ. Օրբելյանի գրական ժառանգության մեջ ուշագրավ տեղ է զբաղեցնում «Ողբ ի դիմաց Կաթողիկէին» քնարական-էպիկական պոեմը, որ առաջին անգամ հրատարակվել է 1790 թ. Նոր-Նախիջևանում[30], ապա՝ 1846 թ. Կալկաթայում, իսկ այնուհետև Թիֆլիսում՝ 1885 թ. Կ. Կոստանյանցի աշխատասիրությամբ։ Պոեմի ընդարձակ վերնագիրն է. «Բան բարառնական ողեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու ս. Կաթուղիկէին. Ողբ աւաղական և ձայն աշխարականք լեալ անհուն հեծեծանօք աւերման աշխարհիս Հայոց և բնաւին սպառելոյ հայրապետութեան և թագաւորութեան համազունդ իշխանութեան, շարեալ չափաբան բերմամբ հոմերական արհեստիւ ի Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի»[31]։ Կ. Կոստանյանցի կարծիքով Ստ. Օրբելյանը «Ողբը» գրել է 1299 թ.։ Մ. Աբեղյանը հավանական է գտնում, որ «այս քնարական քերթվածը» պատմիչ-բանաստեղծը «հորինել է 1300 թվականին»[32]։ Մեծանուն գրականագետը հանգամանորեն վերլուծում է պոեմի գաղափարական բովանդակությունը, նշում նրա գեղարվեստական արժանիքները և կատարած դերը հայ միջնադարյան բանաստեղծական արվեստի զարգացման ասպարեզում[33]։ Թեև մոնղոլների տիրապետության ժամանակ Օրբելյան իշխանների ճկուն դիվանագիտության շնորհիվ Սյունիքը գտնվում էր համեմատաբար տանելի պայմաններում, այդուհանդերձ Ստ. Օրբելյանը հասարակական-քաղաքական երևույթները «Ողբի» մեջ չի դիտում միայն իր նեղ տոհմային շահերի տեսանկյունից, այլ, ընդհակառակն, որպես հայրենասեր մտածող դրանք մեկնաբանում է ժողովրդի ազատագրության ջերմ պաշտպանի և երկրի քաղաքական անկախության գաղափարախոսի դիրքերից։

Թեմատիկ առումով և բանաստեղծական հնարանքներով Ստ. Օրբելյանի «Ողբը» հարազատ է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» քերթվածին։ Ավելի քան հավանական է, որ և՛ Ստ. Օրբելյանը, և՛ Խ. Կեչառեցին իրենց նույնատիպ չափական ստեղծագործությունները հորինել են Ն. Շնորհալու «Ողբի» անմի-

---

28 Նույն տեղում։

29 «Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1949, № 2, էջ 77—78։ Հմմտ. «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դարեր», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. 1, Երևան, 1951, էջ 33։

30 Վ. Դիլոյան, Հաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 192։

31 «Ստեփաննոս Օրբելեանի «Ողբ ի ս. Կաթուղիկէն»։

32 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, Երևան, 1946, էջ 215։

33 Նույն տեղում, էջ 227։

ջական ազդեցությամբ և ժամանակի պահանջով։ Իրենց հերթին նրանք էլ դրական ազդեցություն ունեցան հայ ժողովրդի ընդհանուր ազատագրական պայքարի գաղափարական հասունացման վրա ինչպես իրենց կենդանության օրոք, այնպես էլ հաջորդ դարերում։

Ստ. Օրբելյանի «Ողբը» նպատակային ուղղվածությամբ լուրջ ազդեցություն ունեցավ Հռոմի պապի ոտնձգությունների դեմ հայ եկեղեցու անկախության համար մղվող պայքարի գործում, որպիսի երևույթը, հատկապես դավանաբանական վեճերի տեսքով, դրսևորվեց Գրիգոր VII Անավարզեցու կաթողիկոսության տարիներին (1293—1307) և իր արտացոլումը գտավ Սյունյաց պատմիչի՝ 1302 թ. գրած մեկ այլ ստեղծագործության մեջ, որը կոչվում է «Թուղթ վասն հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ յարեւելեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր՝ դրեալ ձեռամբ տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ընդ նմին և դաւանութիւն ուղղափառ հաւատոյ սրբոյն Գրիգորի Սքանչելագործի և Աթանասի Աղեքսանդրացւոյ»։

Ստ. Օրբելյանն իր մետրապոլիտության տարիներին մեծապես նպաստել է հայ մատենագրության բուռն զարգացմանը, սեփական միջոցներով օրինակել է տվել աստվածաբանական, կրոնա-դավանաբանական և պատմագիտական բնույթի մի շարք ձեռագրեր, որոնցից մի քանիսը հասել են մինչև մեր օրերը։ Այսպես, 1303 թ. Եսայի Նչեցին գրում է, թե ձեռագիր մատյաններից մեկը ինքը կատարել է «ըստ հայցման հաճոյութեան բարեսէր կամաց երջանիկ և գերիմաստ նախասացեալ արհիականին (Ստեփանոսի Օրբելեան)... ի դառն և անբարի ժամանակիս, որ տատանեալ ծփեմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ և արտաքուստ. հարկեցուցիչ հրամանաւ գրեցի զսա աղքատ և չքաւոր սեղանով զծառայակիցսն կերակրելով»[34]։ Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության՝ Աղթամարում 1303 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում Դանիել գրիչը նշում է, որ այս մատյանը շարադրել է «ի խնդրոյ աստուածարեալ գիտնական և արդիւնական վարդապետի, միանգամայն և արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփաննոսի, որ է ակն արևելեան և աթոռակալ մեծի Սիւնեաց տանն»[35]։ Մատենաորիրը փստաբանում է Օրբելյան տոհմը և նրա ականավոր ներկայացուցչին. «Եւ եթէ նախնականօրն քննեսցուք զնա,— գրում է Դանիելը,— ոչ ոք է յիշխանացն և յիշխեցելոց արևելից կողմանցն բարձրագոյն քան զնա, զի ամենեցուն քաջայայտ է աղգն և նախնիքն նորա և նա այնպէս է ի մէջ նոցա փառաւորագոյն և պայծառ, որպէս զարեգակն ի մէջ աստեղաց»[36]։

Ստ. Օրբելյանի հանձնարարությամբ ավետարաններ է ծաղկել Գլաձորի համալսարանի շրջանավարտ, բազմարդյուն արվեստագետ Մոմիկը։ 1302 թ. օրինակած ավետարաններից մեկի հիշատակարանում նա գրում է. «զգերարուն բանի սպասաւորն և զարեգակնափայլ լուսատուն հոգոց՝ զմետրապոլիտն Սիւնեաց զտէր Ստեփաննոս ստացող, յիշեցէք ի տէր, ծաղկող Մոմիկ»[37]։

---

34 Հ. Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Դաղյան խաչիկ վարդապետի. մասն Բ, Վաղարշապատ, 1893, էջ 47։

35 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 13։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 8—9։

Սյունյաց պատմիչը գրել է նաև մի շարք նամակներ, որոնցից պատմական արժեք են ներկայացնում հատկապես Եսայի Նչեցուն հղածները։ Այդ նամակներից մեկում Ստ. Օրբելյանը գրում է, որ հայ ժողովուրդը տառապում է «ոչ միայն յարտաքին նեղչացն, այլև ի ներքուստ»[38]։

Ստ. Օրբելյանի առաջնորդության տարիներին ծաղկում են Սյունյաց նահանգի ուսումնական հաստատությունները. առանձնապես մեծ հռչակ է ձեռք բերում Գլաձորի համալսարանը, որի բաբունապետ Եսայի Նչեցու նկատմամբ նա ջերմ համակրանք ուներ։

Ժամանակի գրիչների և մատենագիրների կողմից Ստ. Օրբելյանին վերագրված բազմաթիվ պատվանունները («աստուածարեալ գիտնական և արդիւնական վարդապետ», «հզաւր և իմաստուն գիտնական», «գերաբուն բանի սպասաւոր» և այլն) կարող են կռվան հանդիսանալ այն ենթադրության համար, որ Ստ. Օրբելյանը դասավանդել է Գլաձորի համալսարանում։

СТЕПАНОС ОРБЕЛЯН

Г. М. ГРИГОРЯН

(Резюме)

Степанос Орбелян, известный армянский митрополит,—выдающийся армянский историк XIII в. В настоящей статье рассматриваются разные стороны жизни и деятельности историка, дается краткий анализ важнейшего труда Орбеляна—«Истории области Сисакан»—одного из крупнейших памятников армянской историографии, показывается большое значение этого произведения для изучения истории сопредельных с Арменией стран и народов. На основании исторических сведений предполагается, что Ст. Орбелян преподавал в Гладзорском университете.

38 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 848, էջ 81ա։